Կարգապահական գործ ԿԳ-14130

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հունվարի 16-ի թիվ 9-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ԿԳ/7-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի և Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Դանիելյանին (արտոնագիր 1015) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 27.10.2014թ. տրամադրված տեղեկանքի Արթուր Դանիելյանն ունի 35.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մարտից մինչև 2014թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը և գործի հանձնումը Խորհրդին.

27.10.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 360-Ա/ԿԳ-14130 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արթուր Դանիելյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

27.11.2014թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 19.05-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի բացատրությունները.

Փաստաբան Արթուր Դանիելյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին նիստին անհայտ պատճառներով չէր ներկայացել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Արթուր Դանիելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.10.2010թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.01.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Արթուր Դանիելյանն ունի 35.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մարտից մինչև 2014թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 27.10.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Արթուր Դանիելյանն իր անդամավճարի պարտքը մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.01.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Արթուր Դանիելյանի (արտոնագիր 1015, ստացված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2014թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով.

- 12.03.2014թ. հարուցվել է վարույթ, 23.05.2014թ. Խորհրդի թիվ 104ԿԳ/1-Ա որոշմամբ Արթուր Դանիելյանը ենթարկվել է տույժի՝ խիստ նկատողության ձևով (համարվում է մարված):

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Դանիելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Համաձայն Կարգի 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության

վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով: ...»: Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Արթուր Դանիելյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի 27.10.2014թ.-ի և 16.01.2015թ.-ի տեղեկանքներով:

Միաժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ Արթուր Դանիելյանը ևս մեկ անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու համար, սակայն այն ևս չի նպաստել նրան, որ Արթուր Դանիելյանը փոխի իր վարքագիծը և չխախտի ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Պալատի ներքին իրավական ակտերի պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արթուր Դանիելյանին (արտոնագիր 1015) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:
2. Փաստաբան Արթուր Դանիելյանի (արտոնագիր 1015) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:
3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արթուր Դանիելյանին:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան